Արձանագրություն N 2

2026-2027 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» «Դեկտեմբերի» 2025թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 11.11.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի դեկտեմբերի 1-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի դեկտեմբերի 2-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Արփիմեդ» ՍՊԸ	info@arpimed.com	03519299
2	«ԱԼՖԱ ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ	import@alfapharm.am	02606482

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Արփիմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ բանկային երաշխիքի գործողության ժամկետը հրավերով սահմանված է հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, սակայն «Արփիմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման մեջ նշված է բանկային երաշխիքի գործողության ժամկետը հրավերով սահմանված է հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված իննսուն աշխատանքային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 01.12.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

- «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/15» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, մերժել առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Արփիմեդ» ՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները::
- Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «ԱԼՖԱ ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի հայտը՝ բարձր գնային առաջարկ ներկայացնելու հիմքով:
- Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/15» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 1-ին չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, իսկ 2-րդ չափաբաժնի

մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/15» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 17.12.2025թ.-26.12.2025թ. նեռարյալ ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Ս. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան